

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻԱՅԻՆԻՆԻՆ

Տնտեսական հանգամանքներ.—Ներքին Տն.
Սովորել. Ժողովրդական հանրաժողովի ներ-
կայացում. Բազուի իրականութիւնից. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆԻՆ. Պատերազմի
շուրջը. Արտաքին լուրեր.—Ներքին լուրեր.—
ՅԱՏՏՈՐԱՐՈՒԹԻՆԻՆԻՆ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆԻՆԵՐ

Ընթացիկ տնտեսական կեանքը մեր
երկրում խառն զրոյթեան մէջ է: Դրա-
մական տագնապը, որ մի քանի տարիներ
շարունակ ծնւում է մեր վաճառանոցնե-
րը, ոչ միայն չէ անցել, այլ ըստ երե-
ւոյթի դեռ պէտք է ազդէ մեր երկրի
զրամական գործառնութիւնները վրա:
Թէ ընդհանուր վաճառականական դէպ-
քերում, թէ նախապէս արդիւնագործու-
թեան մէջ և թէ զանազան ուրիշ գոր-
ծառնութիւնները մէջ—փողի պակասու-
թիւնը շատ զգալի է: Չը կան ազատ դը-
րամագրութիւններ, որոնցից օգտվէին ար-
դիւնագործութիւնը և առևտուրը:

Մեր երկրի զրամական տագնապը ա-
ւելի մեծ է կործանիչ կը լինէր և նա
զարծած կը լինէր տնտեսական մի մեծ
աղէտ, եթէ մեղմացնող և բուժող ազ-
դեցութիւն արած չը լինէին մի քանի
խոշոր հանգամանքներ: Մենք մատնացող
կը լինենք երկու հանգամանքի վրա: Նախ
և առաջ պէտք է աչքի առաջ ունենալ,
որ վերջին երեք տարիները մեր երկրի
բերքը ընդհանրապէս վատ չէր. նա կամ
միջակ էր, կամ միջակից բարձր, կամ
տեղ-տեղ նոյն իսկ շատ բաւարար: Ան-
կասկած կային և շատ փնտրված տեղեր,
բայց երկրի արդիւնաբերութեան ընդհա-
նուր բնաւորութիւնը անբաւարար չէր:

Թէև, ճիշդ է, առանձին առաջադիմու-
թիւն և զարգացում չէ նկատվում մեր
գաւառի տնտեսական կեանքում, բայց չէ
կարելի հերքել, որ նա մի որոշ չափով
վերակազմակերպի իր նախկին տարիների
կրած զգալի փոփոխութիւնը: Եւ եթէ
մեր գաւառական քաղաքների առևտուրը
և արհեստը պահպանվեցին յայտնի աստի-
ճանի վրա և զոհ չը դնային ընդհանուր
կրկնապի ուժեղ հարուածներին, այդուհի
զեր կատարեց մեր գիւղի զրոյթիւնը:

Երկրորդ բարեկալի հանգամանքը, որ
մեղմացրեց տնտեսական տագնապի ար-
տայարութիւնը, դա Բագուի նախա-
գործութեան փոքր ի շատէ բարեբա-
ղան, նախահանքերը և նախագործա-
րանները նորից կենդանացան, բազմաթիւ
բանուր դասակարգը նորից աշխատանքի
աղբիւր գտաւ իր համար: Մակայն չը
նայելով ամիսներ շարունակվող բաւարար
գներին, դեռ չէ վերադարձել Ալաշերո-
նեան թերակղզու նախկին եռուն կեան-
քը: Դրամական տագնապը այնքան մեծ
էր, նրանից առաջ եկած հարուածը այն-
քան ուժեղ էր, որ մինչև այժմ շատ
գործեր կարգի չեն գալիս և դեռ պա-
տեհականութեան վտանգից չեն ազատվել:
Կան և մի քանի ուրիշ նպաստաւոր
հանգամանքներ, որոնք մեղմացնում էին
մեր երկրի մէջ սկսված կրկնապի ոյժը:
Եթէ զրանք գոյութիւն չունենային, մենք
ենթադրված կը լինէինք սարսափելի ա-
ղէտի: Եւ մեր մերձաւոր անցեալը ու
ներկան դրոյում են մեզ խուսափել այն
խոշոր և հիմնական տնտեսական սխալ-
ներէն, որոնց շնորհիւ մենք առաջ բե-
րինք մեր երկրում այնպիսի մեծ տնտե-
սական ճգնաժամ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Կիրակի, օգոստոսի 15-ին, Ն. Մուրաշկոյի
թատրոնում կայացաւ Թիֆլիսի Հակա-ալի-

հօլական ընկերութեան Հաւաքարի բաժան-
մունքի հայ թատերասերների մշտական խմբի
ժողովրդական հանրամատչելի ներկայացում:
Ներկայացրին Ա. Արեւիկայի «Մարվոյ ճրագ-
ներ» երեք գործողութեամբ դրաման և Վ.
Մարաթեանի «Կլոթ-կլոթ» մէկ գործողու-
թեամբ վոզովիլը:

Դրամայի ընտրութիւնը իրրեւ ժողովրդա-
կան ներկայացման նիւթ աշող էր: Առհասա-
րակ ժողովրդական հանրամատչելի ներկայա-
ցումներ կազմակերպող անհատները պէտք է
աշխատեն իրանց ընդհանուր հարստացնել
այդպիսի պիեսներով, որովհետեւ դրանք իրանց
բոլորականութեամբ շատ մասշնի են հասա-
րակ ժողովրդին: Դրամայի ներկայացումը իւր-
եւ սիրողների ձեռնարկութիւն բաւարար ա-
շողութիւն կունենար, եթէ սիրողներից մի
քանիսը իրանց աններդաշնակ խաղով չը խան-
գարէին ընդհանուր տպաւորութիւնը: Բացի
Ստփարեանից (Աղէքսանդր) և Գրիգորեանից
(ձեռնարկ Յակոբ) բոլոր սիրողներն էլ ընդ-
հանրապէս բաւարար կերպով կատարեցին ի-
րանց դերերը: Անենից շատ աչքի էր ընկնում
Մարաթեան Սերբի դերում:

Վոզովիլի ներկայացումն անհամեմատ աւելի
թոյլ էր, որովհետեւ մի քանիսը իրանց դերերը
նոյն իսկ լաւ չէին սովորել, օրինակ Դատանը
(Բերդիսկի): Աչքի էր ընկնում Սողոմոնեանը
իր գոյարճալի խաղով (Մուրաթ-Ալա): Ժողով-
րդական հանրամատչելի ներկայացումները
կանխաւոր հիմքերի վրա դնելու համար ա-
մենից առաջ պէտք է աշխատել դերեր աւելի
ևս քեփանցելու, քան թէ այդ երեկոյեան էր և
բացի դրանից ներկայացումների համար վար-
ձի մի այնպիսի դահլիճ, որ լինէր քաղաքի
կենտրոնից մի քիչ փոքր: Իսկ այդ կէտերը ի-
րագործելու համար մեր հարուստները առհա-
սարակ պէտք է իրանց զրամական նուէրնե-
րով նպաստեն ժողովրդական հանրամատչելի
ներկայացումների վերին աստիճանի համա-
րելի գործին: Դահլիճի մի երբորդ մասը դա-
տարկ էր:

ԲԱԳՈՒՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՆԻՆ

Բագուի պ. նահանգապետը ցանկութիւն էր
յայտնել անձամբ ծանոթանալու քաղաքի բո-
լոր սանիտարական բժշկների և թաղական
հոգաբարձուների հետ և միասին խորհրդակե-
ցելու բոլորիս զբաղեցնող հրատապ խնդրի
մասին:

Հիւղաքների, օգոստոսի 12-ին, ժամը 1-ին
քաղաքագլխի փոխանորդի հրաւերով ժողովել
էին քաղաքային տանը թէ սանիտարական-
գործնական կոմիտեայի անդամները և թէ
թաղական հոգաբարձուները:

Ուղիղ ժամը 1-ին ներս մտաւ քաղաքագլխի
պաշտօնակատարի առաջնորդութեամբ իշխան
Նազիկիձէն և խնդրեց ծանօթացնել բոլոր իւր
օգնականներին և աշխատակիցներին հետ, ապա
դիմեց բոլոր ներկայ եղողներին՝ բացատրելով
այդ օրվայ տեսակցութեան նպատակը:

Եթէ մինչև այսօր, ասաց իշխան նահան-
գապետը, մենք իրաւունք ունէինք փոքր ինչ
անհոգութեամբ վերաբերվելու մեզ սպառնա-
ցող վտանգին, այսօր մենք պարտաւոր ենք
լրջօրէն և զիտակցութեամբ վերաբերվել, ո-
րովհետեւ ես ճիշդ տեղեկութիւններ եմ ստա-
ցել, որ խօսքն թէ հրանում և միւս մերձա-
ւոր բաղաքներում չէ նուազում և, բացի այդ,
նա անցել է և մեր սահմանը ու այժմ կտու-
րած է անում Մերվում: Մենք ոչ մի իրաւունք
չունենք, որ վաղը նա չի այցելի մեզ, և դրա
համար էլ հրաւիրել եմ ձեզ, իմ աշխատակից-
ներին, միասին խորհրդակցելու մօտակա ըս-
պառնացող վտանգի մասին: Դուք բոլորը գոր-
ծում էք ժողովրդի մէջ, լաւ ծանօթացած կը
լինէք իրերի զրոյթեան հետ և այժմ հարա-
ւորութիւն կունենաք արտայայտելու ձեր կար-
ծիքը և ենթադրեալ միջոցները՝ քաղաքի սա-
նիտարական զրոյթիւնը բարւոքելու համար:
Յանձնի իմ դուք կը գտնէք մի անխնայ աշ-
խատակից և ես, ինչպէս նահանգի կառավա-

րիչ, իմ ամբողջ ոյժը և միջոցները դնում եմ
ձեր տրամադրութեան տակ: Իմ դուք բաց է
ձեզնից իւրաքանչիւրի առաջ և առանց որ և
է ձեռնարկութիւնների դուք օր ու գիշերվայ
որ ժամին որ կամենաք, կարող էք ներս մըտ-
նել ինձ մօտ և յայտնել ձեզ հանդիպած դը-
ժուարութիւնների մասին. կամ անմիջապէս
ես ձեզ հետ դուք կը գամ կարգադրելու,
կամ ուրիշ միջոց ձեռք կառնեմ, յամենայն
դէպս, չի անցնի մի ժամ և ձեր առջև երևան
եկած խոչընդոտը կը վերանայ:

Գործնք միասին, համերաշխ եռանդով և
սրբութեամբ կատարենք մեր բարոյական
պարտքը,—որքան դա մեզնից է կախված և
որքան ներում են մեր ոյժերը—վերջացրեց
իշխան նահանգապետը իւր ճառը:

Այնուհետև լուրջիւր ընդհանրութիւնները, որոնք
այս կամ այն տեսակէտով յարուցվում էին,
քննվեց քաղաքագլխի կերպով և կայացրվեց
այս կամ այն որոշումը: Մտքերի ազատ փո-
խանակութիւնը հարաւորութիւն տուեց շա-
տերին հրապարակ հանել քաղաքատեսակ երե-
ւոյթներ, որոնց մասին կարելի եղաւ լսել և
ծանօթանալ նահանգի կառավարչի կարծիքի,
հայեացքների հետ:

Ի միջի այլոց պ. նահանգապետը իւր դժու-
հութիւնը յայտնեց քաղաքային վարչութեան
անդամների բացակայութեան առիթով թէ
նախկին ժողովներում և թէ ներկայ խորհր-
դակցութիւններ:

Ռ. Յովհաննէսեան

Բագու

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսրուհի Մարիա Ալեքսանդրովայի Կոյրե-
րի Հոգաբարձութեան Կովկասեան Բաժնի
խորհուրդը մեզ խնդրում է տպագրել, որ մին-
չև 1904 թիւ յուլիսի 1-ը Բաթանմունքի դրա-
մարկում կար 10170 ռ. 15 կ.: Յուլիսի ըն-
թացքում եղել է 4538 ռ. 54 կ. եկամուտ,
որ և կամուտ է ընդամենը 14708 ռ. 69 կ.:
Նոյն ամսում ծախսվել է 1773 ռ. 89 կ. և օ-
գոստոսի 1-ին ֆուտ է 13934 ռ. 80 կ., որից
գտնվում է. 1) պետական բանկի Թիֆլիսի
բաժնի խնայողական գանձարանում 255 ռ.
32 կ., 2) տոկոսաբեր թղթերով նոյն տեղում
պահուստի 6,000 ռ., 3) Թիֆլիսի առևտրական
բանկում ընթացիկ հաշուով 5036 ռ. 41 կ., 4)
Թիֆլիսի Փոխադարձ Վարկի Ընկերութեան
փոխ ընթացիկ հաշուով 1497 ռ. 75 կ. և 5)
Բաթանմունքի գանձարանում առձեռն գումար
145 ռ. 32 կ.—ընդամենը 12934 ռ. 80 կ.:

Օգոստոսի 14-ին Ա. Բ. Եւանգելովի կազ-
մակերպած խումբը, 11 հոգուց բաղկացած,
փորձել է բարձրանալ Կաղբէկ սարի գագա-
թը: Միայն 6 հոգի կարողացել են մտնալ
տեղի գագաթին, բայց խոր ձիւնը, բազմա-
թիւ ծածկված ձեռքովածներով և մառախլա-
պատ եղանակը ստիպեցին այդ համարձակ
անձերին վերադառնալ Երմոլովեան կայանը:
Այսօր ճամբորդներն աշողութեամբ վայր ի-
ջան սարից և վաղը կուղևորվեն դէպի Տերեկի
և Արտօնի աղուները և Տէյի սառցադաշտը:

Գերմանական «Berl. Tageblatt» լրագիրը
հաղորդում է, որ Մօսկվայի Արշեան կուրբի
այս տարի դէպի Կովկաս կազմած գիտնական
էկսպեդիցիային աշողվել է կովկասեան լեռ-
ների մի գիւղում պատահել մի մահախտական
ցեղի, որը իւր կրօնով և սովորութիւններով բո-
լորովին տարբերվում է իւր հայրենա ընդր ցե-
ղերից: Գիտնական էկսպեդիցիային աշողվել
է վերոյիշեալ ցեղի մասին բաւական տեղե-
կութիւններ հաւաքել, որոնք ցոյց են տալիս,
որ այդ ցեղը գաղթել է Արաբիայից 6-դ դարու
վերջում (Ք. ծ. յ.) և մինչև օրս մարբութեամբ
պահպանել է իւր ազգային առանձնայատկու-
թիւնները:

Լրագիրները հաղորդում են, որ օգոստո-
սի 5-ին Թաւրիզում խուռն քաղմութեան
ներկայութեամբ պրիւլատ-բոցնետ Ջլաուգո-

րովը ոռւտեղէն լիզուով դասախօսութիւն
կարդաց խօլբայի մասին: Իսկ Թաւրիզի ձա-
նապարհների գլխաւոր բժիշկ Ֆիլատովը
հակախօլբային շիճուկ է ներարսելու. ցան-
կացողները շատ շատ են:

ԱՐԴԱՆՈՒԶԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի
4-ին Շաւշթից այստեղ հասաւ պրօֆէսոր Մառ
հնագիտական հետազոտութիւնների կատարելու
նպատակով: Նա այցելեց Արդանուշի մի քա-
նի հնութիւնները, Վասկանուշի աւանդական
գերեզմանը, վանքը և այլն: Նրա ուղևորու-
թիւնը դէպի շրջակայ գիւղերը՝ Նորաշէն,
Տանձկոտ, Կլարձէթ ապարդին չանցաւ: Բա-
ցի հնագիտական հետաքրքրութիւնը յազեցնե-
լուց, նա գտաւ պատահամբ Տանձկոտի մըզ-
կիթի պատի վրա մի ըստ երևոյթի կարևոր
արձանագրութիւն վրացական խուցուրի լեզ-
ւով: Պ. պրօֆէսորը բարձրացաւ և Արդանուշի
բերդի վրա կանքը նոյն իսկ վտանգի մէջ
դնելով: Այսօր, օգոստոսի 9-ին, նա ուղևոր-
վեց դէպի Սպիդա հետազոտելու նրա մեծ
և հռչակաւոր եկեղեցին և գտնելու նրա շրջա-
կայում Շաւթիքի պատմական վայրը»:

ՕԼԹԻՑ մեզ գրում են. «Բաւական ժամա-
նակ է, որ մեզանում մանուկների մէջ տա-
րածված է կարմրուկ հիւանդութիւնը և բա-
ւական թուով զոհեր է տանում: Գիւղերը,
փառք Աստուծոյ, յիշեալ անկող հիւրից մինչ
օրս ազատ են: Յիմախակի կարծում ենք
«Մշակի» էջերում, որ մեր Բագուի և
Թիֆլիսի հայ դերասանական խմբերի ան-
գամ—դերասանները ամառվայ սեզօնին այ-
ցելում են Կովկասի զանազան գաւառա-
կան քաղաքները և գիւղերը և իրանց ներ-
կայացումներով պիտանի դառնում գաւա-
ռացի հայ ժողովրդին: Մեր դերասանները
կողմից իսպառ մոռացութեան են տրված մեզ
օտ գտնվող Օլթի աւանը և այստեղի հայ
գիւղերը»:

ՔԵՇԻՇԲԵՆԻ գիւղից (Ալեքսանդրօպոլի
գաւառ) մեզ գրում են. «Ամսիս 2-ի և 3-ի
ցրտերից ֆնտակցին Մոնշուլի, Արուս և
Քէշիշքեանը գիւղերի ցանքները: Առաջին եր-
կու գիւղերի ցանքները մի մասը միայն ֆնտա-
վեց, պատճառն այն է, որ ցրտած հոգերի
մեծամասնութիւնը գտնվում է լեռնայան շե-
րում: Իսկ ինչ վերաբերում է Քէշիշքեանը
գիւղի ցանքներին, որոնք գտնվում են տափա-
րակ տեղում, դրանց մի մասը հաղււ աղատվեց,
այն էլ շնորհիւ Լանշի-Թափայ լեռան: Առհասա-
րակ ցրտը եղած ժամանակները աւելի ցըր-
տահար են լինում այն տափարակի ցանքները,
որտեղ օդի հոսանք չը կայ, իսկ լեռնայան շե-
րում, ուր բամու և օդի մշտաւ հոսանք կայ,
ցանքները ազատ ֆնտ են ցրտից: Հաշիխալի
և Միքաբի հասարակութեան ֆնտցեալ քան
գիւղերը, որոնք միշտ ենթակա են եղել բը-
նութեան այդ պատահարին, այս տարի բոլո-
րովին ազատվեցին և առատ բերք է սպաս-
վում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆԻՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՆՈՒՄ

Կուրպաշկին ուզում է օգնութեան հասնել
Պօր-Արտուրին: Բերլինի լրագրներում հրա-
տարակված է հետեւալ տեղեկութիւնը. «Գե-
ներալ-ադիւտանտ Կուրպաշկին իւր տրամա-
դրութեան տակ Ռուսի 250 հազար մարդուց
բաղկացած զօրը: Բայէ առ քաղէ մեծ ճակա-
տամարտ է սպասվում: Յաղթութեան դէպ-
քում Կուրպաշկին ղեկաւորութիւն ունի օգ-
նութեան հասնել Պօր-Արտուրին, որը, զօր-
բերի հրամանատարի ասելով, կարող է դիմա-
նալ էլի երկու ամիս: Զիֆուրից արժանահա-
ւատ աղբիւրից հաղորդում են, որ երապոս-
ցիները օգոստոսի 9-ին կատարի կերպով գրո-
տուին Պօր-Արտուրի վրա, սակայն յետ մըզ-
վեցին ահադին կորուսաներով: Նպօյնացինե-
րը Պօր-Արտուրի մօտ սպանվել են ընդա-
մենը 50 հազար մարդ: (Բ. Բ.):

Անհրաժեշտ է թափառել Մանգոլիայում:
Ուստի ինչպե՞ս է ռազմավարական գործընթացը
Մանգոլիայում անհրաժեշտ կերպով բարձ-
րանում են. շատ առարկաներ ամենին չը
կան. պայտե մեխերի գինը հասա թարբինում
մինչև 80 ռուբլի: (ՄԱՖ):

Չափազանցած գովազդներ Տոգոյին: «Neue
Freie Presse» լրագրերը գտնում է, որ ծովա-
պետ Տոգոն արժանի չէ այն գովազդներին,
որ նրա վրա թափում էին ամբողջական և այլ
լրագրերը, որովհետև նա ոչ մի ծովային
պատերազմ չէ տուել այդ խօսքի իսկական
մարդով: Մինչև անգամ Նապոլեոնի պալա-
տական են նրա գործունեության եղանակը:
Բայց ծովապետ Տոգոն հասա մի ուրիշ նպա-
տակի. իր գործողություններով նա ապահովեց
հապոնացիների յետ նահանջումը հարկաւոր
դէպքում: Նրա մատուցած ծառայությունը այն
է, որ նա ընկել չէր անում և կարողացաւ
պահպանել իր նաւատորմը. չը թող տուեց
ռուսաց նաւատորմին կտրական պատերազմ
տալու և մաս մաս թուլացրեց նրան: (ՀՈԲ):

—Եւրոպական լրագրերը հաղորդում են,
որ «Եօլիկ» այլուից Սախալինի ափերի մօտ
և դուրս գցվեց ափի վրա: Հրդեհը իբր թէ
առաջացել է հապոնական նաւերից արձակված
ռումբերից: (ՀՈԲ):

—«Daily Tel.» լրագրեր թղթակիցը հաղոր-
դում է, որ Ռուսաստանը իբր թէ նորանոր
շոգենակեր է ձեռք բերում արտասահմա-
նում կրէյսերների վերածելու համար նը-
րանց: (ԲԵՐ):

Խուլիսուգները օգնում են հապոնացիներին:
«Ind. Belge» լրագրին հաղորդում են Չիֆուից,
որ ամբերիկացի երկու օֆիցեր եղել են խուլ-
իսուգների բանակում և անձամբ համոզվել են,
որ խուլիսուգները մոտիկ յարաբերություններ
ունեն հապոնացիների հետ: Եւրոպացիները
նրանցից իւրաքանչիւրին վճարում են ամսական
25—30 տէլ, նայելով ձիււոր են, թէ հետեակ
նրանք: Օֆիցերներին խուլիսուգները ցոյց
տուին տեղերի վրա անցկացրած կազակների
երկու գլուխ: «Morn. Post» լրագրին ասում է,
որ ներկայումս 6000-ից ավելի խուլիսուգներ
կան Մանչուրիայում, որոնք բաժանված
երեք խմբի՝ գործում են Լեաօանի, Գիրինի
և Պարբինի շրջաններում: Նոյն լրագրի
խօսքով, էլի խուլիսուգների մի խումբ երեք
Մոնղոլիայում երկաթուղին փչացնելու նպա-
տակով: (ՀՈԲ):

Շանգայի նաւահանգստի յեզոգութեամբ հարցը:
Անգլիական քաղաքական շրջաններում տիրող
համոզմունքով, շատ լուրջ բնաւորութիւն է
ստանում Շանգայի նաւահանգստի չէզոքու-
թեան հարցը: Բէյլէրի հեռագիրները հաստա-
տում են, որ հակառակ ստատուսի վճարին, հա-
պոնացիները օրական մի քանի անգամ պա-
հանջում են չինական իշխանութիւններից ան-
յապաղ զինաթափ անել կամ նաւահանգստից
հեռացնել «Ասիաթիկ» և «Գրոզովոյ» նաւերը:
Մի քանի լրագրերին ասում են, որ հապոնա-
ցիները վճարել են սպանել մինչև երեքաւորի,
օգոստոսի 10-ը, և ապա ցոյց անել Շանգայի
նաւահանգստի առաջ: Հիւպատոսները Շանգ-
այում հաւատացած են, որ հապոնացիները
սպանաւորեց այն կողմը չեն անցնի և որ
գործը խաղաղ կերպով կը կարգադրվի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ներկայ տարվայ օգոստոսի 18-ին (ն. տ.)
Վերսալի քաղաքի Շտուտգարթ մայրաքաղաքում
բացվեց ամբերիկահայտների միջազգային կօնգ-
րէսը: Ամբերիկահայտների միջազգային կօնգ-
րէսներից մէկը առաջին անգամ գերմանական
հողի վրա կայացաւ 1898 թ. Բերլինում, 1900
թ. կայացաւ Պարիզում, իսկ նախալերշինը
տեղի ունեցաւ Նիւ-Յօրկում: Կօնգրէսի նպա-
տակն է ուսումնասիրել Ամբերիկայի ընդհանր
ծագումը, լեզուն, մարդաբանութիւնը, պատ-
մութիւնը, աշխարհագրական տարածումն և
այլն:

—Գերմանացի հոգեւորական զբոսաւորը
Գերհարդ Հաւսպտանը շուտով կը հրատարա-
կէ իր «Բիւֆօնիստիկ» զուարթ կոյսերը՝ վեր-
նագրով հինգ գործողութեամբ կատակերգու-
թիւնը, որ առաջին անգամ էր ներկայացնեն
Բերլինի Լեաօանի թատրոնում: Կատակեր-
գութեան նիւթը վերցրված է ժամանակակից
կենսաբիւրքերից:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՏ ԳՈՐԾԱԳԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

14 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գերմանա-աղիւստան Կուր-
պատկինի ամենահպատակօրէն հեռագիրը Նո-
բին Կայսերական Մեծութեան Անունով 1904
թ. օգոստոսի 13-ից. «Օգոստոսի 12-ին եւ-

պօնացիները յարձակում էին գործում միայն
նախկին արեւելեան զօրաւորների դէմ:
Եւրոպացիները զօրքերը բաղկացած էին հե-
տեակ երկու դիվիզիայից բաղկաւոր արտի-
լէրիայով: Երկու կողմերն ևս անցրին զիշերը
իրանց պատերազմական դիրքերի վրա, որոնք
բաժանված էին 3-ից մինչև 5 վերստ տարա-
ձուութեամբ: Մեր կորուստներն էին երեկվայ
օրը մօտ 100 սպանվածներ և վիրաւորվածներ:
Գիրինը, բացի մանր ընդհարումներից, հան-
գիստ անցաւ: Ներկայ թւի լուսաբացին հա-
պոնացիները սկսեցին յարձակումը զօրքի ամ-
բողջ ճակատի վրա: Վերոյիշելով մասին ամե-
նահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսե-
րական Մեծութեանը:—Գերմանա-լեյտենանտ
Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին 1904
թ. օգոստոսի 13-ից. «Ներկայ օգոստոսի
13-ին հակառակորդը յարձակում սկսեց ման-
ջուրական զօրքի ամբողջ ճակատի դէմ: Իրանց
ձախ թէկն վրա հապոնացիները վաղ առաւօ-
տից գրաւեցին երկու թուղթի դէպի արեւմուտը
Գինչուտանովի (15 վերստ դէպի հիւսիս Պայ-
չինից), Տօրուժայա և Գանցուանով, յետ
մղելով այդտեղից մեր առաջաւոր պահակները:
Կէսօրին հակառակորդի յարձակումը այդ հո-
րաբաժնում կանգ առաւ: Անշանչական դիր-
քի ձախ թէկն առաջ դեռնելով ձեռք բերեց
պահ զօրամասերի դէմ հակառակորդը լուսա-
բացից առաջ կենտրոնացրեց մինչև մէկ և կէս
դիվիզիա արտիլէրիայով, և այդ ոյժերի ճնշ-
ման տակ մեր առաջաւոր զօրամասերը հե-
ռացան դէպի գլխաւոր դիրքը: Հակառակոր-
դի յարձակումը այստեղ առանձնապէս յամու
բնաւորութիւն չունէր: Մեր կորուստները հա-
րաւային ճակատի վրա հասնում են մինչև
150 հոգու: Հարաւարեւելեան ուղղութեամբ
թիւղանթաձուութիւնն սկսվեց առաւօտեան
5½ ժամին: Առաւօտեան մօտ 6 ժամին հրա-
ցանձգութիւն սկսվեց ամբողջ հարաւարեւ-
ելեան ճակատի վրա և երեւց, որ հապոնական
հետեակ զօրքը յարձակում է գործում մեր
դիրքի աջ թէկն վրա: Եւրոպական երկու բա-
տալիսների յարձակումը աջ-թէկեան հողա-
բաժնի վրա յետ մղվեց մօտ առաւօտեան 7
ժամին: Առաւօտեան մօտ 11 ժամին հապո-
նական 24 թիւղանթային բաւարեւան ծառ-
սիւնովի մօտ (Լեանդեսանից 8 վերստ դէպի
հարաւարեւմուտը) մեր բաւարեւանների կրա-
կից ստիպված էր լուել: Ծառաները և ձիա-
ւորները փախան: Ի դերե ելան հապոնացի-
ները փորձերը՝ հանել թիւղանթայինները մեր
կրակի տակ: Յերեկվայ մօտ 1 ժամին հակա-
ռակորդը ուժեղացրեց յարձակումը Կօֆինց-
դիի դէմ (Լեանդեսանից 6 վերստ դէպի ա-
րեւմուտը) և երեւան հանգիցին նրա նշանաւոր
ոյժերը Լաօղենտանի շրջաններում (14 վերստ
դէպի հարաւարեւմուտը Լեանդեսանից): Եւ-
րոպացիների բոլոր յարձակումները յետ մղ-
վեցին: Մեր զօրքերը, իրանց կողմից յարձա-
կում սկսելով, յետ մղեցին նրանց դէպի Նա-
խիգուտ հովիտը: Մեր կորուստներն են մինչև
300 մարդ: Արեւելեան ուղղութեամբ հապոնա-
ցիները լուսաբացին սկսեցին յարձակումն
ամբողջ ճակատի վրա: Մեր աջ թէկն վրա մեր
զօրքերը հեռացան առաջաւոր դիրքերից, ո-
րոնք տեղական պայմանների պատճառով
խանգարում էին արտիլէրիայի գործողութեա-
նը և անցան դէպի գլխաւոր դիրքը: Կոն-
արեւելեան ուղղութեամբ լուրջ էր: Բանը
սուիններին հասաւ: Մեր կորուստներն են
մինչև 1000 մարդ: Այլ ևս զեկուցումներ գոր-
ծի ընթացքի և մանրամասնութիւնների մասին
չը կարողացան ստացվել: Կէսօրից Լեաօեա-
նում և շրջականներում սկսեցին տեղալ բաւա-
կան սաստիկ անձրեւներ: Ձրի մակերեսովը
գետերում բարձրանում է:

ՎԼԱԴԻՄԻՐ ՍՈՍԻՍԿԻ: (Սեփ. թղթակիցից): «Ռու-
սիայի» և «Գրոզովոյ» վիրաւոր զինուորները
սաստիկ ցանկանում են վերագրանալ և մտնել
զօրքի կազմի մէջ: «Ռուսիայի» և «Գրոզովոյ»
վրա շտապով աշխատանքներ են կատարվում
նրանց կարկատելու համար: Շուտով կրէյսեր-
ները պատրաստ կը լինեն ծովը դուրս գալու
համար:

ԲԻՐՍՏ-ԼԻՏՎԱՆԿ: Թագաժողովը Յենարե-
վիչի ծնունդը յաւերժացնելու համար դուրս
որոշեց արկանել առ ոտս Նորին Մեծութեան
հաւատարմով հպատակութեան զգաւորութեան
արտայայտութիւնը, անուանել կառուցվող զիւ-
նադրան—Թագաժողովը Յենարեվիչ և Մեծ
իշխան Ալեքսէյ Նիկոլաւիչի զինաւորաւ:

ՆԻՐՈՒՐԳ: Անցաւ հիւսիսային ուղղութեամբ
մի մեծ զոգնաւ ուսուց գլխաւորական զօրա-
կի տակ: Նրան ուղեկցում են երկու ակններ:
ԵՆԼԵՑ: Թագաժողովը Յենարեվիչի ծնունդը
յաւերժացնելու համար դուրս որոշեց արկանել

առ ոտս Նոյն Մեծութեան հաւատարմով
հպատակութեան շնորհաւորութիւններ, ներել
9368 ռուբլի ապուրիկներ չքաւոր բնակիչներին,
յատկացնել 8000 ռուբլի տարրական զարոյցի
կառուցմանը, «Ալեքսէյուսի» անուանելով նը-
րան:

ՍՍՐԱՏՕՎ: Պետրովսկի դուրս թագաժո-
ղովը Յենարեվիչի ծնունդը յաւերժացնելու
համար որոշեց մատուցանել Նոյն Մեծութե-
ան հաւորութեամբ, ներել չքաւորաւորն բնակիչ-
ներին ապուրիկները, բանալ 1905 թ. ի դա-
կան զարոյց և առ նրան Յենարեվիչի անունը:

ՏՕԿԻՐ: (Բէյլէր): Կօրէական կայսրը ըն-
դունեց հապոնական զեւպանի ներկայացրած
բէֆօրմների ծրագիրները, այն է անցնել հա-
պոնական դրամը, արձակել կօրէական զօրքը,
բայց կայսերական 1000 մարդուց բաղկացած
թիւղանաւոր զօրքից և յետ կանչել կօրէական
բոլոր զեւպանիներին և հիւպատոսներին, թող-
նելով Կօրէայի շահերի մասին հազաւորու-
թիւնը արտասահմանում հապոնական զիւլո-
մատական ներկայացուցիչներին:

ՏԵՄԵՅՅԻՆ: (Բէյլէր): Յիւնանֆու շրջա-
նում երեքացի պատերին կայքած յայտարու-
թիւններ «Մա՛ արտասահմանեան սատա-
նաներին» խօսքերով: Եօթերորդ (?) ամսից
սկսած, չինացի-քրիստոնեաները աղաւթում
են փախուստով:

ԱՆՏՎԵՐՊԵՆ: (Բէյլէր): Հրդեհը Գօրեկէնում
շարունակվում է. այսօր գտնված են էլի 9
դիւղներ:

ԼՈՆԴՈՆ: (Բէյլէր): Տօկիօից ստացված տե-
ղեկութիւններ համեմատ, կառավարութեան
պատկանած հողի վրա գտնված են ոսկու հա-
րուստ հանքեր, որոնք կարող են տալ 2-3
միլիոն ֆունտ ստէրլինգ:

Կ. ՊՈԼԻՍ: Հայ-լուսաւորչականների պա-
տրիարքը դանգաւորեց Իլիւի-Գիւսիկին, որ հա-
յերի դրութեան վերջին ժամանակները շատ
ծանրացել է. ափսոսանքով նախանշեց շա-
րունակվում են հարստահարութիւնները և
մինչև անգամ Կ. Պոլսում տեղի ունեն ձեռքա-
կալութիւններ: Բօլշաքական արեւելից ստաց-
ված տեղեկութիւնների համեմատ, յունական
ոչ-մեծ բրոնտակաւքեր բռնութիւններ են կա-
տարում բօլշաքական գիւղերում:

ԲԵՐԼԻՆ: (Սեփ. թղթակիցից): Օգոստոսի
13-ին Լեաօեանից ստացված տեղեկութիւննե-
րի համեմատ, ամբողջ ճակատի վրա տեղի
ունեցան ընդհարումներ առաջաւոր զօրամա-
սերի միջև: Արեւելեան ճակատի վրա տեղի
ունեցաւ տար կօն: Կօրսօկի երեք դիվի-
զիաներ յարձակումն սկսեցին, բայց յետ մղ-
վեցին: Ռուսները անպատճառ դարձրին հապոնա-
կան 32 թիւղանթներ: Բնորոշ էր այս անգամ
ռուսական զօրքի պերագնացութիւնը:

ԼՈՆԴՈՆ: (Բէյլէր): Օգոստոսի 14-ին Տեան-
ցիլիում ստացված մասնաւոր, բայց վստահ-
ի տեղեկութիւնների համեմատ, հապոնացիները
Ինչան մարտկոցի կողմից մտան Պօրտ-Արտուր:
Եւրոպացիները սակայն յապաղում էին հա-
ղորդել որ և է բան պաշտօնապէս, մինչև որ
ճակատամարտը կատարելապէս չը վերջանայ:

ՎԱՇԻՆԴՏՆ: (Բէյլէր): Եւրոպական զեւ-
պանն այցելեց պետական զէւպարտաւէսար և
զոնիւնաւորութիւն յայտնեց ռուսական նաւերը
Շանգայում զինաթափ անելու համաձայնու-
թեան առիթով, սակայն այն միտքը յայտնեց,
թէ էական է այն, որ զինաթափութիւ-
նը այնպէս լինի, որ զոհացնէր հապոնական
զօրապետներին:—Հաղորդում են, որ Եւրո-
պան չէ պնդում իր իրաւունքի վրա՝ արգե-
նել ռուսական նաւերին մտնելու Չինաստանի
դաշնագրի նաւահանգիստները, որովհետեւ ներ-
կայումս Եւրոպայի անաւել բան որ և է ու-
րիշ պետութիւն ցանկանում է պահպանել Զի-
նաստանի չէզոքութիւնը իր ամբողջ ոյժով և
չը խառնել ընդհարման մէջ մնացած չէզոք
պետութիւնները: Յուսարով պատերազմի յաղ-
թական ելքի վրա, Եւրոպան ի նկատի ունի
խաղաղութեան այնպիսի դաշնագիր, որով
նախատեսվել ռուսական բոլոր նաւերի անձ-
նատուր լինելը—թէ չինական նաւահանգիստ-
ներում զինաթափ արվածները և թէ Պօրտ-
Արտուրում ու Վլադիվոստոկում գտնվողները:

ԲԵՐԼԻՆ: Նիւ-Չեռանից ստացած տեղեկու-
թիւնների համեմատ, օգոստոսի 13-ին սկսվեց
հապոնացիների ընդհանուր յարձակումը Լեաօ-
եանի վրա: Խուլագրիւն խմբերին հետամուտ
եղող զիվիզիան օգոստոսի 12-ին գրաւեց
Լեանդեսան, իսկ յետոյ յարձակում սկսեց
զօրքի հապոնական ամբողջ զիւնը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Օգոստոսի 13-ին ճանապարհ
ընկան Բաւառացի Պրուսական Հէնրիխ
պրինցը և Բաւառացիներ Լիւդվիգ պրինցը:

Օգոստոսի 14-ին ցերեկվայ մէկ ժամին
Պետերսֆից Կայսերական գնացքով ճանա-
պարհ երկան Հեռաւոր Արեւելք գնացող զօ-
րքի գտնվելու տեղերը Թագաւոր Կայսրը,
Մեծ Իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչ և հե-
ծելագորքի գեներալ-տեսուչ Մեծ Իշխան Նի-
կոլայ Նիկոլաւիչ:

15 օգոստոսի

ՏՕԿԻՐ: Նօդուրի և Կուրսկի զօրաւորչու-
ներին էլի օժանդակ զօրքեր են ուղարկված,
այն է ուղեւորող զիվիզիա, երկրորդ հեռա-
ւոր բերեցաւ և մօտ երեք պահեստի զիվի-
զիաներ:—Պօրտ-Արտուրի մօտ գտնվող առա-
ջին զիվիզիայի հրամանատար պրինց Ֆուլշ-
մի, որը մինչև այժմ գլխաւոր մասնակցու-
թիւն էր ընդունում Պօրտ-Արտուրի մօտ,
յետ է կանչված, ուրիշ պաշտօն ստանալով:—
Մարշալ Եւաւագատար գտնվում է Եօփօնաւա-
յում:—Լուր է պատում, որ Օկուն օգոստոսի
13-ին յարձակում սկսեց Անշանչական վրա,
իսկ Կուրսկին—Անպինի վրա:

ԼՈՆԴՈՆ: Եւրոպական միասնան չը ստացաւ
Պօրտ-Արտուրի գրաւման մասին «Ստանդար-
դում» տպված տեղեկութիւնը հաստատող հա-
ղորդագրութիւնը:

ՍԱՍԻՆ: Ալեքսանդրովսկի եկաւ Կուսու-
նայի մօտ կալանաւորված շիւտան 13 հա-
պոնացիներով:
ԼԵՍՈՆԱՆ: Լուրերի համեմատ, Պօրտ-Ար-
տուրին սպասում է նոր շտաբ, որ հապո-
նացիները դիտաւորութիւն ունեն կատարել
մերձակայ լուսնայ գիշերներից մէկում: Լեա-
օեանի վրա նկատվեց հապոնական օդաւարիկ,
որ արձակված էր շատ կարելի է Բիւկուից:—
Չը նայելով երեկվայ ճակատամարտի բարե-
նպաստ ելքին, ռուսները ըստ երեւոյթին դի-
տաւորութիւն ունեն կենտրոնացրել իրանց
զօրքերը, յետ քաշվելով Լեաօեանից:—Չօրքե-
րի թիւղանաւորի հաղորդակցութիւնը Պարբի-
նի հետ կատարելապէս ազատ և անվտանգ է:
—Ասում են, որ գերմանա Ստեյսէլից չըստ օր
առաջ տեղեկութիւն է ստացված Պօրտ-Ար-
տուրից, որ բերել կարող է դիմանալ էլի վեց
շաբաթ:—Օգոստոսի 13-ին Պօրտ-Արտուրից
եկաւ ամբերիկական ծովային գործակալը, որը
կարծում է, որ բերել կարող է դիմադրու-
թիւն ցոյց տալ էլի երեք ամիս:

ՏՕԿԻՐ: Պաշարող զօրաւորչաց Պօրտ-Ար-
տուրի առաջ Շանգայի վրայով հաղորդում
են, որ հապոնական հետեակ զօրքին աջողվեց
մի քանի անգամ կրկնվող յարձակումներից
յետոյ վերջնականապէս տիրել Իոչան մարտ-
կոցին: Եւրոպական արտիլէրիան այդ կէտից
կը սկսի ուղեւորելով ամբողջութեամբ ներքին
գիծը և Սոյշինի մարտկոցները:

ՆԻՐՈՒՐԳ: Ռուսական զինուորական զօրաւոր
տակ և ականանաւերի ուղեկցութեամբ ան-
ցած շոգենաւը, ըստ ամենայն հաւանականու-
թեան, «Տէրէկ» կրէյսերն է:

ՄՕԳԻԼԵՎ: Հեռաւոր Արեւելք ուղևորվեց
Կարմիր Նաչի խումբը 50 մանձակաւներով:

ՍՍՐԱՏՕՎ: Մէլչանների հասարակութիւնը,
Թագաժողովը Յենարեվիչի ծնունդը յաւեր-
ժացնելու համար, որոշեց աղքատ մէլչաննե-
րին ներել 30,000 ռ. ապուրիկներ, ապաստա-
րան բանալ 20 տղա որբերի համար, անուա-
նելով նրան «Ալեքսէյուսի» և տարեկան 2000
ռ. յատկացնել Օգոստովա Նորաձնի անու-
նով թղթակի համար:

ԿՕՎԵՆ: Գերմանա-նաւահանգստի կարգա-
դրութեամբ, ազատված են պատից երկրի
գլխաւոր հրամանատարի պարտաւորական կա-
նօններ խախտողները, նոյնպէս և բոլոր կա-
թօլիկ քահանաները, որոնք բանտարկված էին
վանքերում աշխարհական իշխանութիւնից
պատժվող յանցանքների համար:

ԳԻՐԱՆԻՍՏԱՆ: Ամերիկական «Բաւալմօր» կրէյ-
սերը հրաման ընդունեց ուղևորվել չինական
շրջերը:

ՊԱՐԻՉ: Արտասահմանեան լրագրիւններում
տպված են տեղեկութիւններ Պարիզում երե-
ւան հանված լրտեսութեան գործի վերաբեր-
մամբ: «Մատան» և «Պրետի Պարիզիէն» լրա-
գիրներին տակնով, հապոնական զինուորական
գործակալը աշխատում էր իբր թէ տեղեկու-
թիւններ ստանալ Հնդկա-Չինաստանի պաշա-
պանութեան վերաբերմամբ, սակայն գործա-
կալը հերքում է պէ: Տեղեկալ շր

